**Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Վերիշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի աշխարհագրություն ( 13 դասաժամ), ֆիզկուլտուրա (32 դասաժամ), ֆիզիկա (6 դասաժամ), երգ (4 դասաժամ), կերպարվեստ (4 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար**

Մրցույթնանցկացվում է երկուփուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորմանփուլնանցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակածհարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույ նկրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթությանմասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասինհամապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայությանդեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արականսեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 31-ից մինչև սեպտեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022 թ. Սեպտեմբերի 15-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Սյունիքի մարզի Վերիշենի միջնակարգ դպրոցում, հասցե՝ՀՀ Սյունիքի մարզ գ. Վերիշեն 1-ին փ. 72շ.: Տեղեկությունների համար զանգահարել 093 258947 հեռախոսահամարով: